ԼՈՆԴՈՆ

# Բերեզովսկին՝ մեղադրողի դիրքերում

Լոնդոնում «Պատերազմի եւ խաղաղության հարցերի լուսաբանման ինստիտուտի» (ՊԽՀԼԻ) թղթակից Թոմաս դե Վաալի հետ հարցազրույցում Մոսկվայից վտարված նախկին ուժեղագույն քաղաքական գործիչ Բորիս Բերեզովսկին մեղադրել է նախագահ Պուտինին չեչենական հակամարտությունը սանձազերծելու եւ այժմ էլ սրելու մեջ։ Նա դատապարտել է իր ընկերոջ՝ չեչեն առաջնորդ Ասլան Մասխադովի հատուկ ներկայացուցիչ Ահմեդ Զաքաեւի կալանավորումը, նշելով, որ դրանով հարցի քաղաքական կարգավորման ամեն հույս կորչում է։ Ինչպես հայտնի է, Զաքաեւը ձերբակալվել էր Կոպենհագենում՝ ռուսական իշխանությունների պահանջով։ Նա Մասխադովի ներկայացուցիչն էր Արեւմուտքի հետ բանակցություններում։ Բերեզովսկին նրան բնութագրել է որպես «իրադարձությունների խաղաղ զարգացման պաշտպանի», նշել, որ լավ է ճանաչում նրան 1996 թ.-ից։ Նա խստորեն մեղադրել է ռուսական հետախուզությանը եւ Պուտինին երկու գլխավոր իրադարձությունների մեջ, որոնք, իր իսկ խոսքերով, իշխանության գլուխ են բերել Ռուսաստանի նոր ղեկավարին։ Դրանցից առաջինը չեչեն մարտիկների Դաղստան ներխուժումն է 1999 թ. եւ երկրորդը՝ Մոսկվայում եւ Վոլգոդոնսկում շենքերի պայթյունները, որոնց հետեւանքով 300 հոգի էին սպանվել։

Իր ասելով՝ ամիսներ առաջ ինքը տեղյակ է եղել Դաղստան ներխուժման մասին եւ համոզված է, որ դա սադրիչ գործողություն էր՝ ծրագրված ռուսական հետախուզության կողմից։

Այն հարցին, թե ի՞նչ կասի թալիբների հետ իր կապերի՝ նրան ուղղված մեղադրանքի մասին, որ «Ռոսիյսկայա գազետա» բերում չեչեն կառավարության նախկին մի նախարար հարցազրույցի ժամանակ նշել էր, պատասխանել է ծաղրելով. «Ռուսաստանում հիմա ամեն ինչում ինձ են մեղադրում»։

Բերեզովսկու կենսագրության մեջ Չեչնիայի հետ կապերը խիստ խորհրդավոր են։ 1990-ին սկսած ավտոմեքենաների բիզնեսում («Լոգովազում») նա փոխտնօրեն էր նշանակել մի չեչենի։ 1999-ին խորհրդարանի անդամ էր ընտրվել Կարաչայ-Չերքեզիայի հանրապետությունից՝ անմիջական աջակցությամբ նրա ղեկավար Վլադիմիր Սեմյոնովի, որը սերտ կապեր ունի Չեչնիայի հետ։ Առավել առեղծվածային են նրա կապերը, ըստ ՊԽՀԼԻ-ի, Շամիլ Բասաեւի եւ Մովլադի Ուդուգովի հետ։ Բերեզովսկին հաստատել է, որ ինքը 1998-ին իր սեփական գումարներից 2 միլիոն դոլար է հատկացրել Բասաեւին, որպեսզի վերջինս Չեչնիայի Չիրի-Յուրտ գյուղում ցեմենտի գործարան կառուցի։ Իսկ Ուդուգովի հետ նրա ծանոթության համար երախտապարտ պետք է լինեն բրիտանացիները, քանի որ նրա միջոցով է Բերեզովսկին կարողացել 1998-ին ազատ արձակել տալ երկու բրիտանացիների՝ Կամիլլա Կարրին եւ Ջոն Ջեյմսին, որոնք պատանդ էին վերցվել Չեչնիայում։

«Այդ ժամանակ Ռուսաստանում Բրիտանիայի դեսպան Անդրու Վուդի խնդրանքով ես կապ հաստատեցի Զաքաեւի եւ Ուդուգովի հետ ու խնդրեցի, որ ազատեն այդ մարդկանց», ասել է նա։ Ենթադրվում է, որ Ուդուգովն այժմ գտնվում է Ծոցի երկրներից մեկում։ Բերեզովսկու ասելով՝ ինքն այլեւս կապ չունի նրա հետ։

Բերեզովսկին, որն, ըստ լրատվության, այժմ «մարտավարական դաշինք» է կնքել կոմունիստական կուսակցության՝ իր նախկին թշնամիների հետ, պայքարելու նախագահ Պուտինի դեմ, հարցազրույցի վերջում կատակով նշել է, որ, համենայն դեպս, «չի կարելի ասել, թե ամեն կապ խզված է Պուտինի հետ»։

For Your Internal News of Armenia Log on to In
www.azg.am
English, Russian, Armenian and Turkish

ԱՐԱԶ
ՆՈՐ, ՄԵԾ ՀԱՐՄԱՐ ՎԱՃԱՌԱՍՐԱՀ
Ամիրյան փող.
ՄԱՏՉԵԼԻ գներ
Ամիրյան 15
հեռ. 53-42-26
ԹԻՎ 1 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



«Միլավիցան» Երեւանում
...Աննախադեպ գներ, լայն ընտրանի
Կանանց նրբագեղ ներքնազգեստի «Միլավիցա» խանութ-սրահն այսուհետեւ կանանց ու աղջիկներին հրավիրում է գնելու եվրոպական հանրահայտ «Միլավիցա» ֆիրմայի արտադրանքը՝ ցանկացած ճաշակի եւ ցանկացած չափսերի ու առանց տարիքային սահմանափակման։
Մեր հասցեն է՝ Կասյան 7,
27-50-40։

529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Կգնեմ** գրքեր ավտոմեքենաների ղեկասարքավորումների վերաբերյալ հայերեն կամ ռուսերեն։ Հեռ. 263261։
- **Վաճառվում է** «MOTOROLA T 191» բջջային հեռախոս։ Հեռ. 524666։ Գինը 90 դոլար։
- **Կգնեմ** «Վազ 2106» մակնիշի ավտոմեքենա 1800 դոլարի սահմաններում։ Հեռ. (09)495295, ժ. 18.00-ից հետո։
- **Փոխանակում եմ** փոքր կենտրոնում գտնվող սեփականացված 80 ք/մ տարածքով սեփական տան հետ։ Հեռ. 09 423833, Արթուր։
- **Տրվում է վարձով** ստորգետնյա ավտոտնակ 2 մեքենայի համար։ Հեռ. 53-31-28, Էմմային։
- **Վաճառվում է** հրակայուն աղյուս ռուսական, բարձր որակի, սպիտակ գույնի։ Զանգահարել 53-31-28, Էմմային։
- **Շտապ վաճառվում է** 1 սենյականոց 52 ք/մ ընդհ. տարածքով բնակարան չեխական նախագծով, 5 հարկանի շենքի 4-րդ հարկում, ունի նաեւ բաց 2 լոջիայի պատշգամբ, որտական, բայց լավ վիճակ, հեռախոս, մշտական ջուր։ Կառուցված ավտոտնակային հարող տարածք։ Նորքի ... Նախնական գինը 4.5 հազ. դոլար, հեռ. 64 21 46։
- **Վաճառվում է** բիլիարդի սեղան, յուղազործված, հարթ դաշտով, իր բոլոր պարագաներով (աքսեսուարներով), չափը 3 մx1.5 մ։ Գինը պայմանագրային։ Հեռ. 289331, Վալոդ։
- **Վաճառվում է** 800 ք/մ տնամերձ հողամաս Օշականում։ Գինը պայմանագրային։ Հեռ. 34-40-71։
- **Կգնեմ** 3 սենյականոց բնակարան քաղաքի կենտրոնում առանց միջնորդի։ Հեռ. 538489։
- **Վաճառվում է** 3 սենյականոց բնակարան Իսահակյան 43, 1 մուտք, 16 բն., 9/4 հարկ, ընդհ. մակերեսը 93 ք/մ, բնակելի մակերեսը 60 ք/մ, բաց եւ փակ ընդարձակ պատշգամբ, մշտական ջուր, ջրատաքացուցիչ (գեյզեր), եվրադուռ։ Հեռ. 524666։
- **Կվարձակալեմ** 1 սենյականոց բնակարան մինչեւ 50 դոլարի սահմանում կենտրոնում կամ Նորքի զանգվածներում։ Հեռ. 56 31 49, 58 59 63։
- **Վաճառվում է** 3 սենյականոց բնակարան 70 ք/մ տարածքով, 2 ննջարան, 1 ճաշասենյակ, նախասրահ, բաց բակ, պատշգամբ։ Հասցեն Սունդուկյան 20, բն. 35, մուտքն առանձին, բակից։ Հեռ. 527200, Մայիս, Օվսաննա։ Գինը 30.000 դոլար։

ՀԱՆՐԱՀԱՅՏ JVC ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ




ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ, ՆՈՐԱԲԱՑ ՎԱՃԱՌԱՍՐԱՀ
Աբովյան փող. 19 հեռ. 56-54-09

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բաղրամյան 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 20. 11. 2002 Գինը՝ 100 դրամ